**Արձանագրություն N 2**

***2025 թվականի Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ հավաքածուների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/7» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան «05» «Դեկտեմբերի» 2024թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Հ. Մնացականյան |
| Հանձնաժողովի անդամներ | Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Սարգսյան |

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Ընդունել ի գիտություն, որ 29.10.24թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի նոյեմբերի 11-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2024 թվականի նոյեմբերի 12-ին ժամը 11:00-ին: 2024 թվականի նոյեմբերի 13-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Իմմունոֆարմ» ՍՊԸ | tender@immunofarm.net | 00650292 |
| 2 | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ | lawyer@c-e.am | 01210095 |
| 3 | «ԱԷՄՋԻ» ՍՊԸ | amg.llc@list.ru | 02863111 |
| 4 | «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ | tender@mlnpharm.am | 02567316 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Իմմունոֆարմ» ԱՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատելիս հանձնաժողովը արձանագրել է, որ կա կարիք հստակեցնելու տեխնիկական չափանիշները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Հ. Մնացականյան)***

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն, որը ենթակա է շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց 03.12.2024թ. կասեցնել հայտերի գնահատումը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել մասնակցին համապատասխան շտկումներ անելու մասին՝

**««Իմմունոֆարմ» ՍՊԸ**

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/7» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություն, որը ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ շտկել և ճիշտ հստակ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում չափման միջակայքը: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:»

Սահմանված ժամկետում «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող շտկումը կատարված էր և ապրանքի ամբողջական նկարագրի (տեխնիկական բնութագրի) ճշտված տարբերակը ներբեռնված էր էլեկտրոնային աճուրդ համակարգ և գնահատող հանձնաժողովը ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը գնահատելիս արձանագրեց, որ ներկայացված տեխնիկական բնութագրի և արտադրողի պաշտոնական կայքի տեղեկատվության միջև առկա է անհամապատասխանություն՝ մանսավորապես հրավերի պահանջով եղել է հստակ պահանջ, որ թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: Գնահատող հանձնաժողովը ճիշտ գնահատելու համար առաջարկեց «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին ներկայացնել նաև հավաստող փաստաթղթեր՝ արձանագրված անճշտությունը բացառելու համար: Վերջինիս կողմից ներկայացված շտկված տեխնիկական բնութագրում նշված էր. «որ թեստ-երիզների ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից (յուրաքանչյուր երիզ առանձին է փաթեթավորված», սակայն իր կողմից ներկայացված հստակեցվող փաստաթղթում՝ «Blood Glucose Meter User Manual» նշված է՝ «Use the test strips within a period of 6 months from the date that you first open the vial», ինչը նշանակում է, որ թեստ-երիզները առաջին բացելուց հետո պիտանի են 6 ամիս, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին (կցվում է): Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *4. Մասնակիցների առաջարկած գների մասին*

---

***(Հ. Մնացականյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 12.11.2024թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

---

***(Հ. Մնացականյան)***

Հրավերի վերաբերյալ 31.10.2024. ստացվել է հետևյալ հարցումը՝ «Հարգելի գործընկեր, Խնդրում եմ պարզաբանել թեստ-երիզների հետ միասին 1000 հատ սարքի մատակարարման պայմանը վերաբերելի է այն մասնակիցերին,որոնք նախորդ երեքից հինգ տարվա ընթացքում թեստ- երզների հետ մատակարարել են սարքեր, թե ոչ, կամ արդյո՞ք հնարավոր է մատակարարել միայն նոր հայտնաբերված դիաբետիկների քանակով, խուսափելու համար սարքերի մեծածավալ կուտակումներից:», և գնահատող հանձնաժողովը որոշեց 04.11.2024թ. էլեկտրոնային աճուրդ համակարգով ներկայացնել հետևյալ պարզաբանումը՝ «Հարգելի գործընկեր: ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/7 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով հստակ նկարագրված է թեստ-երիզների տեխնիկական բնութագրերը և անհատույց օգտագործման հանձնվելիք շաքարաչափ սարքերի մասին»

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *6. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

***(Հ. Մնացականյան)***

1. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի և ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հայտը:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/7» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:
3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/7» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 06.12.2024թ.-ից մինչև 15.12.2024թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ -------------------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ -------------------- Ս. Հարությունյան

-------------------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ -------------------- Հ. Սարգսյան

2025 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ երիզների վերաբերյալ վերջնական գներով 12.11.24թ. կայացած հակադարձ աճուրդից հետո

| NN | Դեղի անվանումը | Քանակ | Նախահաշվային | | «Իմմունոֆարմ» ՍՊԸ | | | | | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ երիզներ | 1,500,000 | 31.86 | 47,790,000 | 34,000,000 | 6,800,000 | 40,800,000 | 22.67 | 27.20 | 36,600,000 | 7,320,000 | 43,920,000 | 24.40 | 29.28 |

2025 **թվականի կարիքների համար ձեռք բերվելիք արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ երիզների վերաբերյալ վերջնական գներով** 12.11.24թ. **կայացած հակադարձ աճուրդից հետո**

| NN | Դեղի անվանումը | Քանակ | Նախահաշվային | | «ԱԷՄՋԻ» ՍՊԸ | | | | | «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վերջնական առաջարկ | | | | | Վերջնական առաջարկ | | | | |
| | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին առանց ԱԱՀ-ով | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | արյան մեջ գլյուկոզայի որոշման թեստ երիզներ | 1,500,000 | 31.86 | 47,790,000 | 40,233,333.34 | 8,046,666.66 | 48,280,000 | 26.82 | 32.19 | 50,000,000 | 10,000,000 | 60,000,000 | 33.33 | 40.00 |

**Changsha Sinocare Inc.**
No. 265, Guyuan Road, Hi-Tech Zone, Changsha,
Hunan Province, 410205,People' s Republic of China
E-mail:intl_mkt@sinocare.com Website:www.sinocareintl.com
Customer service:+86-731-89935929

EC REP **Shanghai International Holding Corp. GmbH (Europe)**
Eiffestraße 80, 20537 Hamburg, Germany.
Tel: +49-40-2513175 Fax: +49-40-255726
E-mail: shholding@hotmail.com

P/N: 36301102-B.5

Blood Glucose Monitoring System

# Blood Glucose Meter User Manual

Safe AQ Smart, Safe AQ Voice, Safe AQ Air

CE 0123 IVD For in vitro diagnostic use only

Sinocare®

4. Click "Link device".
5. Insert test strip, meter turn on.
6. If the bluetooth symbol displayed, it means connect successful. Perform test and your test result will be uploaded to your smartphone. If the bluetooth symbol is flash, please check if you have turned on bluetooth function on your smartphone and insert test strip again.
**Note:** Different App may be little different while pairing meter with smartphone.

## IX. Control Solution Testing

### Why Perform a Control Solution Test
- Ensures that your meter and test strips are working properly.
- Allows you to practice testing without using blood.

### When Should You Perform a Control Solution Test
- When you begin using a new vial of Test Strips.
- When the vial cap is opened for a long time.
- When Test Strips have been exposed to extreme environmental conditions.
- When you want to check whether meter or test strips are work properly.
- When you drop or broken the meter.
- When you want to check whether the test steps are correct.



### Important Information
- Use only Sinocare blood glucose control solution with your Meter.
- Check the expiration date on the control solution bottle. Do not use if expired.
- Use the test strips within a period of 6 months from the date that you first open the vial.
- Record the opened date on the control solution bottle, which is 3 months from when you first open it. Discard the bottle after 3 months.
- Discard any bottle that appears to be cracked or leaking.
- For in vitro diagnostic use only.

### Performing a control solution test
Start with the blood glucose meter off. Prepare the following items before control solution test:
a. blood glucose meter;
b. blood glucose test strip;
c. blood glucose control solution

**STEP 1: Wash your Hands**
Wash your hands with mild soap and water. Be sure to dry your hands before performing a test.

**STEP 2: Insert a Safe AQ Test Strip**
Insert a Safe AQ Test Strip with printing face up and the contact end into the test strip port until it cannot go any further. The blood glucose meter will turn on.